Կազմված է 15.02.2020թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

«ԱԴԵԿՎԱԴ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«15» ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211 122 1122555

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02252295

«02» փետրվար 2020 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

05

ԾՐԱԳԻՐ

«ԱԴԵԿՎԱԴ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2020

«Աղեկվադ» կուսակցության նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում այնպիսի հասարակարգի ձևավորմանը, որը թույլ կտա ՀՀ տարածքում ապրող մարդկանց ձգտել համամարդկային առաքինություններին (խոհեմություն, ողջախոհություն, արիություն, արդարություն) և նպաստել սոցիալական համերաշխությանը:

• Հասարակական համերաշխությունն ու բարեկեցությունը բարձրագույն արժեք են:

• Հայաստանի Հանրապետությունը հասարակական համերաշխության գլխավոր երաշխիքն է:

• Լինելով պաշարված ամրոց՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակիչ պետք է գիտակցի յուր դերը պետության ֆիզիկական և ոչ նյութական պաշտպանական դիմագծերի անվտանգության գործում:

• Հայաստանի Հանրապետության առաջնահերթ գերակայությունն է ուժ կիրառելու մենաշնորհի հաստատումը սեփական տարածքում: Այդ մենաշնորհի հանդեպ ցանկացած ոտնձգություն պետք է համարվի պետության հանդեպ ոտնձգություն:

• Պետության մեջ որոշումներ կայացնելու մեխանիզմները պետք է կրեն բացառապես ինստիտուցիոնալ բնույթ:

• Քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին պետք է պայմանավորված լինի պետականաշինության գործում նրանց անհատական ավանդով՝ անվտանգության, ժողովրդագրական ցուցանիշների ապահովման, մշակութային զարգացման, արտաքին կապերի ամրապնդման, հարկային եկամուտների գեներացման և այլ ոլորտներում:

• Ազգային անվտանգության նկատառումներից ելնելով՝ տեղեկատվական դարաշրջանում պետության անվերապահելի գերակայություններից պետք է լինի նաև ներքին տեղեկատվական դաշտի անվտանգության ապահովումը:

• Պետության երկրորդ գերակայությունն է՝ ապահովել անհրաժեշտ պայմաններ բնիկ (ավտոխտոն) բնակչության բնական աճի համար:

• Պետության երրորդ գերակայությունն է՝ ապահովել այնպիսի կրթական և դաստիարակչական համակարգ, որը բնակիչների շարքերում կսերմանի ձգտում առ չորս համամարդկային առաքինություններ:

• Մշակույթը, սպորտը, կրթությունը պետք է կրեն դաստիարակչական, ոչ թե սպառողական բնույթ: Պետությունը մշակութային մենաշնորհի երաշխավորն է:

• Պատմագիտական օբյեկտիվիզմը պետք է թելադրի խեղաթյուրված պատմության էջերի վերանայում:

• Գիտակրթական և արդարադատության համակարգերի գերակայություններից պետք է լինի պատշաճ գնահատական տալը Հայաստանում 1999թ. հոկտեմբերի 27-ին, 2008թ. մարտի 1-ին, 2016թ. հուլիսի 17-ին և 2018թ. ապրիլի 23-ին տեղի ունեցած իրադարձություններին:

• Պետության չորրորդ գերակայությունն է՝ արտաքին քաղաքական գործընկերների հետ հարաբերությունների կարգավորում բացառապես երկկողմ շահի առկայության դեպքում:

• Պետությունն ապահովելու է Արցախի՝ որպես մեր միասնական հայրենիքի անքակտելի մասի անվտանգությունը:

• Պետական չորս գերակայությունների ապահովման նպատակով անհրաժեշտ է կոնսոլիդացնել համապետական ֆինանսական, ենթակառուցվածքային և մարդկային կապիտալը:

• Տնտեսական պլանավորումը կառավարության ուղղակի պարտականությունն է:

• Արդյունաբերական ոլորտը պետք է գերակա դիրք ունենա սպասարկման և գյուղատնտեսական ոլորտների նկատմամբ: Գյուղատնտեսության հիմնական դերն է պարենային անվտանգության ապահովումը:

• Տեղական արտադրողները պետք է պաշտպանված լինեն արտաքին մրցակցությունից թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում:

• Հարկային օրենսգիրքը պետք է ստանձնի, ի թիվս այլ գործառույթների, նաև հասարակական համերաշխության ապահովման գործառույթ:

• Բնակչության շարքերում արատավոր սովորությունների նվազեցման նպատակով պետությունը պետք է առավելագույն մասնաբաժին ունենա արատավոր սովորություններից գեներացվող եկամուտների մեջ: